

«Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավար  
պարոն Ա. Առուշանյանին  
«ՀիմնաՏավուշ» Զարգացման  
Հիմնադրամի ներկայացուցիչ՝  
Ներսես Շադունցից  
Հեռ.՝ (093-45-23-00)

### Դիմում

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ Ֆրանսիայի հայկական հիմնադրամը երկու տարի է գործում է «Սյունիքի մարզում, իրականացրել է մի շարք ծրագրեր և շարունակելու է օգնել սահմանամերձ գյուղերում առաջացած խնդիրների լուծմանը: Գորիս համայնքում իրականացրել ենք մի շարք ծրագրեր, մասնավորապես՝

1. Որոտան բնակավայրի ոռոգման ջրագծի կառուցում,
2. Շոտնուխ բնակավայրի խմելու ջրագծի և կապտաժի կառուցում,
3. Խնձորեսկ կոոպերատիվին գույքի տրամադրում,
4. Գորիս քաղաքի թիվ 3 դպրոցին սպորտային գույքի տրամադրում,
5. Անհատ ֆերմերներին սարքավորումների տրամադրում,
6. Բանջարաբուստանային կուլտուրաների մշակության համար սածիլների տրամադրում,
7. Այգիների հիմնման համար տնկիների տրամադրում,
8. Մոտորըլոկների տրամադրում,
9. Ջերմոցային տնտեսությունների հիմնում

Հիմնադրամի գործունեությունը Սյունիքի մարզում, մասնավորապես Գորիս քաղաքում էլ ավելի ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է տարածք, ուստի խնդրում եմ Ձեզ համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող ք. Գորիս Մաշտոցի 3 հասցեում գտնվող շենքից՝ հիմնադրամին հատկացնել 15-20 քմ տարածք՝ հետագա 5 տարիների աշխատանքները կազմակերպելու նպատակով:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝



Ն. Շադունց

12.12.2023թ.

